Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Աջակցություն Պրոբացիային Ազգային Ցանցի Հիմնադիր Ժողով)

«19» ՀՈՒՆԻՍԻ 2018թ. **Ք. ԵՐԵՎԱՆ**

«Աջակցություն պրոբացիային» ազգային ցանցի (այսուհետ նաև՝ Ցանց) հիմնադիր համաժողովը հետևյալ կազմով՝

Կազմակերպություն	Ներկայացուցիչ
Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք»	Իրինա Հովհաննիսյան
«Ընտանիք և համայնք»	Քնարիկ Գարանֆիլյան, Արմինե Հովհաննիսյան
«Ընդդեմ իրավական կամայականության»	Շողինե Սողոմոնյան
«Հայաստանի մանկական ասոցիացիա»	Վարուժան Սեդրակյան
Փրոջեքթ Հարմոնի	Սարգիս Նալդռանյան
Սոցիալալական Արդարություն	Անուշ Դանոյան
Երեխաների աջակցության կենտրոն	Մարիամ Բալայան
Քաղաքացիական Հասարակության Ինստիտուտ	Արտակ Կիրակոսյան

«Կոնգրես» հյուրանոցի շենքում 2018թ. հուլիսի 19-ին գումարեց նիստ՝ Կանոնակարգի և Էթիկայի կանոնների ընդունման, Էթիկայի Հանձնաժողովի ընտրության կարգի հաստատման, ինչպես նաև Կառավարման Խորհրդի, Խորհրդի նախագահի, Քարտուղարության և Քարտուղարության համակարգողի ընտրությունների վերաբերյալ որոշումներ ընդունելու նպատակով:

Միջոցառմանը մասնակցեցին ևս երկու ՀԿ, որոնք չանդամակցեցին ցանցին:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ.

1. Կանոնակարգի ներկայացում և ընդունում
2. Էթիկայի կանոնների ներկայացում
3. Էթիկայի հանձնաժողովի ընտրության կարգի հաստատում
4. Կառավարման խորհրդի ընտրություն
5. Քարտուղարության համակարգողի ընտրություն

<u>ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ</u>.

1. Օրակարգում ընդգրկված 1-ին հարցի վերաբերյալ առաջարկվեց 1. լոգոյի մեջ ԱՊԱՑ հապավումը միշտ գրել հայերենով, իսկ ներքևում գրվող տեքստը, ըստ անհրաժեշտության, գրել հայերենով, անգլերենով կամ ընդհանրապես չգրել; 2. փոփոխություններ կատարել Կանոնակարգի 3.6 և 3.7 կետերում:

2. Օրակարգում ընդգրկված 2-րդ հարցի վերաբերյալ առաջարկվեց կանոններին ծանոթանալ գրավոր՝ միջոցառումից հետո և Էթիկայի հանձնաժողովին հնարավորություն ընձեռել ծանոթանալուց հետո ներկայացնել իրենց կարծիքը և առաջարկությունները:

3. Օրակարգում ընդգրկված 3-րդ հարցի վերաբերյալ առաջարկվեց քարտուղարությանն էլ. նամակով առաջարկել 1-3 էթիկայի հանձնաժողովի անդամի թեկնածություն և այդ ցանկից արդեն փակ քվեարկությամբ ընտրել էթիկայի հանձնաժողովի անդամներին: Քվեարկությունը կանցկացվի առցանց (online) և կկազմակերպվի Արմենուհի Հովհաննսիյանի կողմից (<<Ընտանիք և համայնք>> ՀԿ-ից):

4. Օրակարգում ընդգրկված 4-րդ հարցի վերաբերյալ առաջարկվեց Կառավարման խորհրդում ներառել մեկական ներկայացուցիչ հիմնադիր ժողովի մասնակից ամեն անդամ կազմակերպությունից, քանի որ պահի դրությամբ անդամները շատ չեն և բոլորը հանդիսանում են հիմնադիր անդամներ: Արտակ Կիրակոսյանն առաջադրվեց խորհրդի նախագահի պաշտոնում:

5. Օրակարգում ընդգրկված 5-րդ հարցի վերաբերյալ առաջարկվեց Քաղաքացիական Հասարակության Ինստիտուտին մեկ տարով լիազորել ստանձնել Ցանցի քարտուղարությունը: Հջորդ համաժողովին քննարկել Քարտուղարության համակարգողի և Խորհրդի նախագահի դերերի հավանական առանձնացումը, հաշվի առնելով, որ այս տարի նշված երկու պաշտոնները կզբաղեցնի մեկ մարդ:

<u>Օրակարգում ընդգրկված հարցերը համաժողովի կողմից դրվեցին քվեարկության:</u>

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ <u>**Համաժողովը միաձայն որոշեց**</u> ընդունել Կանոնադրությունը՝ հիմնադիր ժողովի ընթացքում կատարված փոփոխություններով:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ <u>**Համաժողովը միաձայն որոշեց**</u> հաստատել Էթիկայի հնաձնաժողովի ընտրության կարգը:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ <u>**Համաժողովը միաձայն որոշեց**</u> Կառավարման խորհրդում ներառել մեկական ներկայացուցիչ հիմնադիր ժողովի մասնակից ամեն անդամ կազմակերպությունից և Արտակ կիրակոսյանին ընտրել Կառավարման խորհրդի նախագահ:

Կառավարման խորհրդի անդամներն են՝

- Իրինա Հովհաննիսյան (Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք»)
- Քնարիկ Գարանֆիլյան («Ընտանիք և համայնք»)
- Շողինե Սողոմոնյան («Ընդդեմ իրավական կամայականության»)
- Վարուժան Սեդրակյան («Հայաստանի մանկական ասոցիացիա»)
- Սարգիս Նալչռանյան («Փրոջեքթ Հարմոնի»)
- Անուշ Դանոյան («Սոցիալալական Արդարություն»)
- Մարիամ Բալայան («Երեխաների աջակցության կենտրոն»)

- Արտակ Կիրակոսյան («Քաղաքացիական Հասարակության Ինստիտուտ»)

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ <u>Համաժողովը միաձայն որոշեց</u> մեկ տարով լիազորել Քաղաքացիական Հասարակության Ինստիտուտին ստանձնել Ցանցի քարտուղարությունը, որի համակարգողն, ի պաշտոնե, կդառանա ՔՀԻ տնօրեն Արտակ Կիրակոսյանը: